ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

THE DEPUTY MINISTER OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA-
HEAD OF LOGISTIC SUPPORT DEPARTMENT
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ

0044, ք. Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: spitak151@rambler.ru
Հեռ. (+37410) 29-43-97
Ֆաքս (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багревандa 5
E-mail: spitak151@rambler.ru
Tel. Тел. (+37410) 29-43-97
Fax. Факс (+37410) 29-46-13

№ ԴՄՎ/1059
«22» 04 2016 թ.

26.04.2016 թ.
04/4863-16

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԵՏ
պարոն Մ. ԱՆԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անանյան

Ի պատասխան Ձեր 12.04.2016թ. №01/04.1/1462-16 գրության՝ հայտնում եմ, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 12.04.2016թ. թիվ 27/16 որոշումը,

- դադարեցվել է 18.03.2016թ. որոշումը՝ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ,

- դադարեցվել է 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով: 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «Վենկոն» ՍՊԸ-ն, պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային կայքում և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված (հաղթող) մասնակցի հետ կկնքվի գնման պայմանագիր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա.ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «13» 04. 2016թ.
ժամը11[00]

Գնահատողներ

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Ս. Աբրահամյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Խ. Երիցյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ղարիբջանյանը:

Գնումների համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ, ՔՀՇ 2-րդ դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 Քանի որ սույն ընթացակարգի մասով 2016թ. մարտի 21-ին «Վենկոն» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք, խնդրելով կասեցնել գնահատող հանձնաժողովի՝ 18.03.2016թ. կայացրած որոշումը՝ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, իսկ այնուհետև 23.03.2016թ. ի լրումն 21.03.2016թ. ներկայացված բողոքի դիմել է բողոքարկման խորհրդին խնդրելով կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը: Գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-27/16 բողոքը քննող հանձնաժողովը՝ 25.03.2016թ. կայցրել է որոշում՝ համաձայն որի «Վենկոն» ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին կայացրած որոշումը 24-ր և 51-րդ չափաբաժինների մասով, կասեցնելուն ուղղված որպես միջանկյալ ընթացակարգ՝ ժամանակավոր միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարել, այդ իսկ պատճառով վերը նշված չափաբաժինների մասով պայմանգիր դեռևս չի կնքվել: Գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-27/16 բողոքը քննող հանձնաժողովը 11.04.2016թ. կայացրել է որոշում, համաձայն որի՝ գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. պայմանագիր կնքելու մասին որոշումը (24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով) դադարեցնելու մասին «Վենկոն» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է (Որոշումը հրապարակված է gnumner.am ինտերնետային կայքում): Հաշվի առնելով, որ որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 30.03.2016թ. թիվ 01/04.1/1237-16 հարցմանն ի պատասխան ԿԱ եկամուտների կոմիտեն 07.04.2016թ. թիվ 1/6-1/11341-16 գրությամբ հայտնել է, որ 01.04.2016թ. դրությամբ «Վենկոն» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 63 203 423 ՀՀ դրամ, որը պակաս չէ մասնակցի ներկայցրած գնային առաջարկից և այն որ Գնումներ բողոքարկման խորհրդի կայացրած որոշումն իրավապարտադիր է, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «Վենկոն» ՍՊԸ-ին և անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 -ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2 դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 -ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու (24-րդ և 51-րդ չափաբաժինների մասով), իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Ս. Աբրահամյան
Գնահատող		Խ. Երիցյան
Գնումների համակարգող՝		Ա. Ամիրյան